

նօթ փորագրական արտադրութիւնները կ'երեւան 1729ի Աւետարանին մէջ նաեւ 1772ի Պետրոս Ղափանցոյ Երզարանին մէջ, սակայն վերջինս լոկ հին կազապար- ներուն վերստին գործածութիւնն է: Ասի- կա կը բացատրուի անով ալ՝ որ այս երկու

կան այլ զօրաւոր պատճառներու վրայ յեցած կու գամ այն եզրակացութեան թէ ԳՐ փայտափորագրողը Գրիգոր Մար- զուանցին է որ ուշագրաւ դիրք մը զբա- ւած է 1694էն 1734՝ իբր Կ. Պոլսոյ ձու- լիչ, փորագրիչ և տպագրիչ: Ինքը կը հաստատէ թէ եղած է զծագրիչը իր պատ- կերներուն՝ որոնք սակայն Եւրոպական՝ աւելի ճիշտ Ոսկանեան Աստուածաշունչին ազդեցութիւնը խիստ հաւատարմօրէն կը- րած են: Գրիգոր մարզուանցին արժանի է մասնաւոր ուսումնասիրութեան: Իր մա- սին առատ հում նիւթ կայ, սակայն պէտք է զանոնք հաւաքել և համեմատել զոհա- ցուցիչ աշխատութիւն մը արտադրելու համար: Յուսամ օր մը զլուխ հանել այս բանը՝ իր հրատարակութիւններն ամբող- ջութեամբ ուսումնասիրելէ և անոնց պատ- կերներուն արտատպութիւններն աչքի առ- ջել ունենալէ վերջ:



թ. 23. Լուսանցագարդ և խորան

Յակոբ Սերաստացիի մնագիր ստորագրութեամբ (տես կողովին ներքեւ):

տպագրութիւններն ելած են Աստուածա- տուրի տպարանէն:

Դարձեալ այս ԳՐ ստորագրող Հայ փայտափորագրիչին է որ կը հանդիպինք 1734ին Յով. Հաննայ Երուսաղէմի Պատ- մութեան ճակատի փորագրութեան մէջ: Այս հրատարակութիւնն ալ Աստուածա- տուրի տպարանէն է:

Շարունակելով քննութիւններս՝ կը հարցը- նենք. Որո՞նք անուան համառօտագրութիւնն է այս ԳՐ-ը: Առ այժմ ենթադրութեան վրայ կը հիմնուիմ. քանի մը թէեւ ոչ վերջնա-

Գրիգոր Մարզուանցիի, կամ ԳՐ ստո- րագրեալ փայտափորագրեալ տպագրական պատկերներու նմոյշներ կան արդէն աշ- խատութեանս մէջ (տես Բզմպ.ի նախորդ թիւը, էջ 238-247, թ. 4, 6, 9, 11, 15, 16, 18, 20). իսկ այս մասին վերջացրնելէ առաջ՝ կ'ուզեմ դարձեալ շեշտել որ առ այժմ ԳՐ և Գրիգոր Մարզուանցոյ ճշդումս ի վիճակի չեմ վերջնական նկատելու:

Փորագրիչ Յակոբի մը կը հանդիպինք 1736ին ի Կ. Պոլիս ի տպարանի խօձայ կարսպետի որդի Մանուէի Աստուածատու- րին տպագրեալ երկհատոր Գերականոսրեան Ա. հատորին 7 էջի կիսախորանին վարի մասին մէջտեղը փակագրեալ. (աստ՝ թիւ 23): Դժբախտաբար այս հրատարակու- թեան յիշատակարանին մէջ Յակոբի մը մասին ոչինչ կայ ըսուած: Սակայն մեզի ծանօթ է որ Սերաստացի երկու եղբայր- ներ Տիրացու Բարսեղ և Յակոբ 1735ին նորակազմ տպարան մը բացած էին Կ. Պոլիս: Այս Սերաստացի եղբայրները ծա- նօթ էին իբր ծաղկարար այսինքն ծաղ- կագարդ պատրաստող հաւանաբար տպա- գրութեանց խորաններու, լուսանցագար- դերու համար, բայց մանաւանդ տպածոնե-